

«Ի Յունիսի ամսոյն մինչեւ Հոկտեմբեր ամիսն ձմեռն է որ բարձր սարերն ձիւն կու գայ եւ այս 4 ամիսս ամէն օր 2 անգամ անձրեւ կու գայ եւ գիշերն մինչեւ լոյս. եւ որքան անձրեւ որ կու գայ ամենն կու հաւաքին ի ծովակ մի որ պատէ 15 օր, եւ Նիլ գետոյ ակն այս ծովակիս մօտ է. կու մտնու այս ծովակիս մեջն, եւ այս ծովակիս ջուրն կ'ելլէ 2 սարամիջով կու գնայ Մար, որ Մարայ երկիրն շէն կը պահէ...».

*Ինչպէս այս նկարագրութենէն կը տեսնուի, Յովհաննէս եպս. Թիւթիւնճի հետաքրքրութեամբ կրցած է ճշդել 1678—1680ին Նեղոսի ծնունդ առած վայրերը, մասնաւորապէս անոր մէկ ճիւղին՝ Կապոյտ Նեղոսի աղբերակը:*

*Նշանակելի է, որ այդ ժամանակամիջոցներուն Նեղոսի աղբերակաց մասին հետաքրքրութիւն մը գոյութիւն ունէր, նոյնիսկ Հնդկաստանի մէջ:*

Ֆրանսացի քօիչկ Ֆրանսուա Պէրնիէ, իր յիշատակուած աշխատութեան մէջ, հալէպցի Մուրաաի՝ Մեծ Մոնկոլի մօտ դիտարկութեան վրայ խօսած ատեն 1660ական թուականներու սկիզբը, կը պատմէ թէ Աղա Տանիշմէնա խան, — վարիչը Մեծ Մոնկոլին օտար խնդիրներու մէջ(1) — որուն ծառայութեան մէջ կը գտնուէր ինք, «սովորականէն աւելի հետաքրքիր» անձ մըն էր: Անիկա «յաճախ զանոնք (Մուրաաը և իր մահմետական բնկերը) հրաւիրեց իրեն մօտ, երբ ես ներկայ էի, ինքզինքը ծանօթացնելու վիճակին եւ կառավարութեան իրենց երկրին, եւ մասնաւորաբար իմանալու Նեղոսի աղբերակաց մասին, զոր իրենք Ապապիլէ (Ababile) կը կոչեն, որուն մասին անոնք խօսե-

(1) Արսափն գործոց նախարար: